

Մինչ հողվածում տեղ գտած մի քանի թյուր եզրակացություններին անցնելը, հարկ եմ համարում հստակեցնել կենտրոնական ընտրական հանձնաժողովի մոտեցումը մամուլի հրապարակումների վերաբերյալ: Մեր խնդիրը ոչ թե նյութի մատուցման ճիշտ ձևը և/կամ լրագրողական էթիկայի կանոնները լրագրողին ուսուցանելն է, այլ անել հնարավորը, որպեսզի ընթերցողը ստանա իրականությանը համապատասխանող, և ոչ մեկնության հետևանքով աղավաղված տեղեկատվություն:

Այս դեպքում հեղինակը համոզված պնդում է, որ 2007 թ-ի մայիսյան ընտրությունների ժամանակ Հանրային հեռուստատեսությամբ նախընտրական քարոզարշավի համար տրամադրվող եթերաժամի սկիզբը սահմանել է ԿԸՀ-ն: Մինչդեռ 2008 թ-ի նախագահական ընտրություններին քարոզարշավի ժամանակ թեկնածուներին եթեր տրամադրելու ժամերը ԿԸՀ-ն չի կարող որոշել, «...որովհետև այդ կերպ կսահմանափակեն «Հ1-ի» ազատությունը»:

Մատնանշելով այս փաստը՝ լրագրողը, կարծում եմ, պետք է ծանոթանար նաև 2007թ. մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից ԿԸՀ-ին հասցեագրված № 03-026 գրությանը, որում հստակ շարադրված է հետևյալը. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2007 թ-ի մայիսի 12-ին կայանալիք հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանելիս խնդրում ենք հաշվի առնել Հանրային հեռուստառադիոընկերության հետևյալ առաջարկությունները.

Հանրային հեռուստառադիոընկերությամբ օրենքով սահմանված 60 րոպե անվճար և 120 րոպե վճարովի եթերաժամանակը տրամադրել քարոզարշավի օրերին ժամը 17¹⁵-ից մինչև 21⁰⁰:

.... նպատակահարմար ենք գտնում, որպեսզի վճարովի եթերաժամանակի ժամանակացույցը նույնպես սահմանվի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից»:

Կարծում եմ՝ այսքանը բավարար է, որ ընթերցողն ընկալի, իսկ հեղինակը հասկանա, որ ԿԸՀ-ն գործում է օրենքի պահանջներին համապատասխան, իրականացնում միայն օրենքով իրեն վերապահված լիազորությունները և իր դիրքորոշումը չի փոխել առնվազն 2003 թ-ից ի վեր:

Տաթևիկ Օհանյան